ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 319 - Ա

ք.Արտաշատ

«15» Հոկտեմբերի 2024թ.

<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՄԿՐՏՉԻ ԱԶԱՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ/ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավետիք Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Մկրտչի Ազատյանի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի ներկայացրած բացատրագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշումով սահմանված Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ուսումնական պաշտոնների անվանացանկով հաստատված <<Հաստատության տնօրենի գործառույթներ>> բաժնի 17-րդ, 18-րդ և 38-րդ կետերի պահանջները խախտելու համար <<ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավետիք Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Մկրտչի Ազատյանի նկատմամբ կիրառել <<նկատողություն>> կարգապահական տույժը:

Recoverable Signature

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ